ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ **N 1**

01 ապրիլի 2024թ.-ին կնքված «**ՀԱՓԿ-ԳՀԱՇՁԲ-24/02**» ծածկագրով՝
Պետության կարիքների համար ոչ բնակելի տարածքի վերանորոգման աշխատանքների
կատարման պայմանագրի

ք. Երևան *31 մայիսի* **2024**թ.

«Հումանիտար ականազերծման և փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ը ի դեմս տնօրեն Վ. Սարգսյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «123 » ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Բաբայանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին (այսուհետ՝ կողմեր), հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 56-րդ կետի 3-րդ ենթակետը, ինչպես նաև «**ՀԱՓԿ-ԳՀԱՇՁԲ-24/02**» գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր), **7.5** կետը կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին՝ Պայմանագրում կատարել փոփոխություն:

Պայմանագրի գինն ավելացնել **2182320 /երկու** միլիոն մեկ հարյուր ութսուներկու հազար երեք հարյուր քսան դրամ/ ՀՀ դրամի չափով և **4.1** կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**4.1** Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **17530021** (տասնյոթ միլիոն հինգ հարյուր երեսուն հազար քսանմեկ) ՀՀ դրամ: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:»

1.2 Հաստատել Պայմանագրի ծավալաթերթ նախահաշիվը՝ հավելված **N 1**-ի և վճարման ժամանակացույցը՝ հավելված **N 2**-ի համաձայն:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3 Համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած Կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.4 Համաձայնագիրը կազմված է **1** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի **N1. N2** հավելվածները հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է Համաձայնագրի!մեկ օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	**ԿԱՏԱՐՈՂ**
«Հումանիտար ականազերծման և	«123» ՍՊԸ
փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ	գործ հասցե Ք. Գորիս,
գործ հասցե Ք.Երևան Արշակունյաց 73ա	Սյունիքի 97,
հվհհ 04724306	Հվհհ 09200345
Երևանի թիվ 1 գանձապետարան	«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
հ/հ 900018002254	հ/հ 163298122439
Տնօրեն Վաղինակ Սարգսյան	Տնօրեն Արնաուդ Բաբայան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.